որի բարեբարութեամբ հռչակեալ համ-բաւիւք:

Հեթում՝ որդի Լեւոնի՝ գնաց ի պա-տերազմ ընդ Թաթարան, և առին զԲե-րիա և զԴամասկոս, որև մեծ պատե-րազմ եղև: Եւ յերկրորդում ռազմին, Ժ.Բ. հազարաւ յաջ թևս պատերազ-մին լեալ՝ ընտրեաց երիս հազարս. և Մը-սըրցիքն Ջ. հազարաւ ճակատեցան ընդ միմեանս Մըսրցոցն. ԵՃ՛Ռ.աւ ազա-տեաց Հայոց քան այր մեռան: Եւ ի փախուստն Սուլթանին անհոգացան Թաթարքն: Իսկ Հեթում Գ.Ռ.աւ զհետ անկեալ փոխ առ փոխ 'ի հանդըր-վանս իջանէին մինչ մօտ ի Մըսր: Եւ երկնչեալ Հեթում՝ գուցէ պարտիցի, և ասէ, շատ է ինձ այս զօրութիւնս, զի նախնիքն իմ զայս յաղթութիւնս ոչ ա-րարին: Եւ ի տեղին զմեծ ծառսն սօսի թրով նշանս արար, և 'ի բարաւորս գրոցն՝ գիրս գրեաց այսպէս. Հեթում

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան